Լուծւելու վրայ է մի հինաւուրց Դ.որդեան հանգայց, Իրլանդիան—դա հին վերը է Մեծն Քրիստոնիոյ մարմին վրայ, Եւրոպայի ամենաազատ սուհմանադրակոն երկիրը, որ աշխարհի չորս կողմում սփռել է ազատ, ինքնավար ու բարդաւած գաղութներ, խորթ ու ճնշող մայր է հանդիսացել իր մենի տակ գանւող կաթոլիկ Իրլանդիայի համար, Քրիստոնական լուծը հարկաւ ապրեր է թիւրբական, ռուսական, գերմանական լծերից, բայց և այնպէս խիստ զգալի է մի հպատակ ժողովրդի համար, որի կաշինաւելի նուրբ է, գիտակցութիւնը աւելի պայծառ, մշակոյթը աւելի բարձր, քան թիւրբակայի, Ռուսաստանի, գերմանիայի ժողովուրդներինը:

Դարաւոր է այդ ճնշող հպատակութիւնը, որ երբեմ —18-րդ դարում, օրինակ — արտայայտւել է բրիտանական մարտկի դաժան հարւածներով —և Իրլանդիայի մի շարք սերունդները ըմբուստացել են ու պայքարել, մեծ մասմբ խաղաղ, օրինական միջոցներով, ձգտել են նւաճել իրենց նիրական հայրենիքի համար այն համբաւաւոր Home rule, որ այսօր ահա ըուէարկւած է միջապէս դատիր մեծ երկրի պատամիւ և օօցիալիստ կուսակցութիւններին: Մեծ Ծերունին, Աւիլեամ Դ.լ ադ ս ա օ ն: այնքան նիդակներ եր ջարդել իրլանդական ինքնավարութեան համար: Լորդերի պարլամը ընդդիմադրում էր միշտ իր բացարձակ veto ն: Այսօր, սակայն, փոխւել է կացութիւնը: Դեմօքրատիզմը, ռամկավարական հոսանքը տիրական դիրք է ստացել կայսրութեան մէջ և 1911-ից ի վեր խափանւել է լորդերի այդ veto-ի իրաւունքը: Մի օրէնք, մի bill, երբ նա արդէն երեք անգամ անցնում է Համայնքների Պալատից՝ բացարձակ, անվիճելի օրէնք է: Նա դարձեալ ներկայացւում է լորդերի ժողովին, բայց դա սոսկ ձևական մի արարողութիւն է: այդ ժողովը գրեթէ այլ ևս գոյութիւն չունի և երկրի ձակատագրի միահեծան տէրը պարլամենտն է, Համայնքների Պալատը, ազգի օրինաւոր ներկայացւութիւնը: Յայտնի է, որ մագաւորի իշխանութիւնն և լոկ անւանական է:

Եւ ահա իրլանդական ինքնավարութեան օրէնքը երրորդ անգամ քուէարկւած Համայնքների Պալատում (351 ձայնով ընդդէմ 274-ի): Խոչընդուները շատ էին, գիմագրութիւնը՝ ուժեղ: Պահպանողականները ի գործ դրին իրենց բոլոր հնարքները՝ օրէնքը վիճեցնելու: Համարի նրանց ուղիղ հանեցին Երլանդիայի ամենահիւսիսային նահանգը, Աւլստ եր, մի նոր Աշնդէ, բազոքական ընդդէմ կաթոլիկ ինքնավարականների Պայմանները բաղաբացիական կոիւ: Ապա պահպանողականները սրս տրու կ ս ի օ ն ի դիմեցին պարլամենտում: Այնուամենայնիւ, ազատական մինիստրութեան նախագահ Ազգուիթ յամառօքէն առաջ առարաւ իր ծրագիրը: Առայժմ յազմանակը ազատականների, օօցիալիստների և իրլանդական հայրենասէրների կողմին (Սօցիալիստները, բնականաբար, իրենց ձայնը աւելի ի նպաստ Իրլանդիայի ազգային ինքնավարութեան):

Օրէնքը բւէարկւած է: առաջին անգամն է Մեծն Քրիստոնիոյ պատմութեան մէջ, որ մի օրէնք անցնում է, առանց լորդերի վաւերացման, հակառակ նրանց:

Դրամայի առաջին գործողութիւնն էր, որ խաղացեց Օրէնքը ընդունւած է, սակայն իսկոյն չպիտի դիմեն գործադրութեան: Եեր բարդութիւններ կարող են ծագել Աւլստէրը սպառնում է նորէն բռնկւիլ, պահպանողականները շարունակում են իրենց յուսահատ ընդդիմութիւնը: Եւ օրովհետեւ այդ զարմանալի երկրում իրերը ընթանում են սովորաբար հանդարտ ու խաղաղ, առանց արիւնահեղ ցնցումների ու հարւածների: Օրովհետեւ անզդիական բնաւորութիւնը սրանչելիօքն մարզւած է խաղաղ, օրինական պարլամենտարիզմի մէջ, ուստի հաւանական է, որ այս ծանրակշիռ պարագայում ազատական կառավարութիւնը միջոցներ կը գտնէ հաշտեցնելու պահպանողականներին, թերեւս զատելով Աւլստերը մնացած, ինքնավար Իրլանդիայից: Յամենայն գեպս, եւկան զիջումի մասին խօսք այլ ևս չե կարող լինել, պարլամենտն է, որ որոշել է տալ Իրլանդիային ինքնավարութիւն — այն պարլամենտը, որ բարձրագուն ու ամենակարող հեղինակութիւնն է երկրի մէջ: Իրենք պահպանողականներն ես, որ նոյնպէս խիստ տարբեր են մեր յիշտառկած երկիրների պահպանողական տարբերից (աւելի մշակւած ու բարեկիրթ, աւելի շիտակ և ընդհանրապէս աւելի տոգորւած ժամանակի, առաջադիմութեան ոգով), վերջիվերջոյ, հաւանականօքէն, աեղի կը տան, կը համակերպին:

ԽՈՅՏԱՎԻԶՄԻ ՅԱՎԱՐԱՆԱԿ ՖՐԱՆՍԻԱՑՈՒՄ:

Հազւագիւտ յազմանակ էր: Ի՞նչ մեծագործ օժէ է պրօպագենութեան դը, անդուլ, յամառ, սթափեցուցիչ պրօպագենութեան բաղաբներում ու դաշտերում, գործարա-

Նառուր պրօլետարիատի և աշխատաւոր ու տառապող գիւղացիութեան մէջ Դրան ենք, անշուշտ, պարտական գերմանական և մանաւոնդ ֆրանսիական սօցիալիզմի անսովոր թուիչքը, որ նեղն ընկած հակառակորդները ձգտում են բացատրել բոլորովին կողմանակի, պատահական պատճառներով կ'նչ տարակոյս՝ որ աշխատաւոր ընդհանրութեան գիտակցութիւնը արթնացել է ամենուրեք և նրան այլ ես խարել չի լինի. Որքա՞ն հնարքներ ի գործ գրեց պահպանողական և յետադեմ բառակը՝ ընտրող ժաղավարդին մոլորեցնելու. Համար Խնդրապետութեան նախագուհը, որ ընտրւուծ է շնորհիւ աշխակողմեան ձայների, թե եր տալիս այդ բանակին. Տառեր է, որ տեղում եին սօցիալիզմի ու բարիկալիզմի ուրուականների դէմ:

Ոչինչ չ'օգնեց Ամենամեծ յաղթաւսկողը դարձեալ
սօցիալիստ կուսակցութիւնն եղաւ: Կրանից յետոյ դա-
լիս են արմատական սօցիալիստները, որ կազմում են
պարլամենտի ամենասաւոր հատւածը: Առասելի ջարդ
կրեցին աշխաղմեաններն ու բոլոր չափաւոր հատւած-
ները: Պարուեց անարդօրևն և բրիանիզմը — մի նոր
չափաւոր հոսանք, որ վերջերս ծայր աւեց հոչակաւոր
ուխտագրութ Արիստիտ Բրիանի, Քարտուի և Միլլրանի
առաջնորդութեամբ և որ ուխաղացման⁴ (apaisement)
պատրաւկով կուղեր վերստին հրապարակ կոչել
յաղթահարւած կղերականութիւնը: Տրիան դարձել էր
բոլոր պահպանողականների և օպպօրտիւնիստների
խնկարկած բուրմը, նա կոչւած էր «Հզօր բազուկով
զսպել», յետ մզել սօցիալիզմի յարաճուն և ահաւոր
պատուհանը: Ահա սակայն նրա կուսակցութիւնը ջարդ
ու փշուր, ընդամենը մէկուկես տասնեակ հոգով և
մտնում պատգամաւորական ժողով Արէնէգատի աստղը
մարած է: այսուհետեւ իր դէմ ունենալով միանդաւայն
ժոռէսին ու Ալեմանսօին, վաղեմի կարմիր անիշխանա-
կանը հաղի թէ նորեն հրապարակ նետուի մինիստր-
նախագահի և նոյնիսկ պարզ մինիստրի պաշտօնով: Այդ-
պէս է պատճւամ դաւաճանութիւնը:

Ընկերվարականները 1,200,000 Հայն շահեցին երկրի
մէջ և Նրանց թիւը պարզամենում 74-ից բարձրացաւ
102-ի Աւելորդ է յիշել, որ այդ յաղթանակը շշմե-
ցուցիչ տպաւորութիւն գործեց ոչ միայն Փրանսիական,
այլ և ամբողջ Համաշխարհային բուրժուազիայի վրայ:
Ի՞նչ կը լինի 10, 20, 30 տարուց յետոյ, եթէ իրենի
զարգացումն ընթանայ ներկայ տեմպով, արագութեամբ...
Այդ հարցումն է, որ սարսափեցնում է սօցիալական
անշարժութեան և բուրժուական առանձնաշնորհների
չսատագովերին:

Այժմից արդեն ընկերվարական կուսակցութիւնը
ծրագրել է մի շարք խորունկ ռեֆորմներ, որ նա պիտի
ձգուե իրագործել, թե թեև աւած արմատական տար-
րերի հետ Արդեն պարագաւում է մի ռեֆորմ գրու

զինւորական եռամեայ ծառայութեան դեմ, որ մոցրեց
նորերս Քարտուի մինիստրութիւնը և որ իրաւամբ հա-
մարում են աւերիչ երկրի համար և ֆրանսիական ժո-
ղովրդի ուժերից վեր։ Ընկերվարակուները պահանջում
են Հիմքից վերակազմել զինւորական սիստեմը, համա-
պատասխանեցնել այն՝ մի մեծ, շարժուն, առաջարկեմ
Հանրապետութեան ոգուն, կազմակերպել բանակը միայն
ու միայն ի նքն ապա շտապ անութեան նպատա-
կով. քայլել աստիճանաբար գեպի հանուր, բազաքացիա-
կան, համար մողով գրդական բան ական բան ական
սիստեմը։ Ֆրանսիան, ասում են ընկերվարակուները, միև-
նույն է իր զինւորական ոյժերով միշտ լինելու և ստո-
րադաս վիճակում հանդեպ գերմանիայի, այն պարզ
պատճառով՝ որ Գրանսիայի ազգաբնակութիւնը գրեթէ
երկու անդամ նւազ է գերմանիոյ ազգաբնակութիւնից։

Աւելի ծանրակշիռ է զուտ սօցիալական ռե-
ֆորմիստի ծրագրը, որի իրականացման հետապնդում է
ընկերվարութիւնը ասանեակ տարիներից ի վեր ։ Աերջին
ընտրութիւնները հնարաւորութիւն են ներկայացնում
իրագործելու մի կարևոր մասը սօցիալիստական այսպէս
կոչւած նւազագոյն ծրագրի։ Եւ ամենէն առաջ՝ հար-
կային սիստեմը՝ Ուղղնել եկամտային տուրքը, թեթեա-
ցնել աշխատաւոր զանգւածների բեռք, ստեղծել ամեն-
ուրեք մարդավայրել կեանքի պարմաններ, կռւել տգի-
տութեան և տառապանքի դէմ, դնել անսասան հիմքերի
վրայ ։ Չ խար հի կ կը թռւթեան գործը, որ
արդէն իսկ յաղթանուկել է Փրանսիայում կրօնակղե-
րական վաղեմի տիրապետութեան աւերակների վրայ,
վերացնել նախապաշարութերի ու սնապաշտութիւնների
հետ նաև անարդ, անսանձ կեղեցումները դաշտերում
և արդիւնաբերական կենտրոններում, մաքանել ազգու,
պետական միջոցներով չքաւորութեան, անաշխատու-
թեան, թօքախտի ու այլ համաճարակների, ալքօհօլիկսի
ու անառակութեան և հազարաւոր այլ ախտերի դէմ,
որոնք բոլորն ել գտնուում են սերտ, փոխադարձ կա-
պակցութեան մէջ, բանի որ բոլորն ել բղխում են
կապիտալիզմի սիստեմից... Խախտել հետզհետէ այդ սիս-
տեմի հիմնախուները և առաջնորդել տառապազ ընդ-
հանրութիւնը դէպի դալոց հաւասարութեան իրաւո-
ւագը, — ահա Փրանսիական (ինչպէս և ամբողջ հա-
նաշխարհային) ընկերվարութեան նպատակը, առաքելու-
թիւնը ։ Թում է թէ հեռու չե մեծ Աերիվայրումի
ժամը... .

ԴԵՊԻ ՊԼԱՆ-ԼԱԾԵԶ.

Առջորական ուխտագնացութիւն չէր այս տարին Առցիալիզմի յաղթական վերելքը մի շտեսնւած խանդավառութիւն էր տարածել պարիզեան տրուարձաններում և Միստն հապարի շափ հսկ բազմութիւն էր, որ մայիս

24-ին ընկերվարական հոշակաւոր պարագլուխների, ժոռէսի ու Այսիանի ուղեկցութեամբ, շարժւեց դեպի Պեռ-Լաշէզի գերեզմանոցը, ուր հանգչում են 1871-ի „Կոմմոնակի“ (*La Commune*) հազարաւոր նահատակները:

„Քառասուն երեք տարի առաջ, մայիս 24-ին—այսպէս էր գրւած ժոռէսի ձեռքով, թափօրի մասին ժանուցումի մէջ—նախարարապետ Թիէր, ներկայացուցիչը մի բուրժուզիայի, որ երկիւղից գազան եր կարել, ջարդի ենթարկեց այն սքանչելի պարիզեան ժողովուրդը, որ միանգամայն հայրենասէր ու ընկերվարական, փորձեց դիմադրել պատերազմի աղետին *), խորակելով այն ռէժիմը, որի ծնունդն էր պատերազմը, Գնանք Պեռ-Լաշէզ, հոյակապ, ողուր թափօրով, գնանք այր, կին, մանուկ, ներշնչւելու այն հերոսների ու նահատակների յիշատակով, որոնք մեռել են իրենց լոգէալի համար, ընկել են բուրժուազիայի գնդակների առկ, որովհետեւ կամեցել են իրականացնել սոցիալիզմն ու միջազգային խաղաղութիւնը”...

Եւ շարժւեց բանւորական ծովը: Ա՞րպիսի հատուցում, քառասուն երեք տարի յետոյ՝ ո՞րպիսի շքեղ բեղմաւորումն այն գաղափարի, որի անունով սարսափահար բուրժուազիան խոշանգել ու կուորել էր այնակ, Պեռ-Լաշէզի գերեզմանոցում, տասնեւկ հազարաւոր պրօլետարներ:

Հարժւում է յիսուն հազար բազմութիւնը կարմիր դրօշակներով դեպի սոցանակիցների պատը **) (*le Mur des Fédérés*), անցնում է հանգարա ու մելամազուապահազարդ Պատի առջևից, ողջունում է հարազատ մեռելներին և ամենքի դէմքերի վրայ ցոլում է յոյսն ու հաւատը, գալոց յաղթանակի հպարտ գիտակցութիւնը, ամենքն էլ ասես մտածում են. „Քառասուն երեք տարի առաջ դուք պարտեցիք ընկերներ, որովհետեւ բշւոր էիք և անպատրաստ, յախուռն էիք և դահավեծ ձեր առնական թռիչքների մէջ, և վերջապէս Պարիզն էր միայն ապստամբը և մարտնչողը, Ֆրանսիան, գաւառը լուս էր, հնազանդ, իսկ այսօր, երբ մենք միիհոն ենք, Պարիզում և Պարիզից դուրս, իսկ վաղը, երբ պիտի դառնանք միիհոններ ու միիհոններ բազմքներում և գաւառներում, կազմակերպւած, գիտակից և պատրաստ՝ Կամմունան պիտի պայմի յաղթական ու անխորտակելի և գաղինական ոբլորի կանչը սասանեցուցիչ զօդանշով պիտի արձագանքէ նաև Ֆրանսիայից դուրս, ամեն տեղ, ուր կօմմունիզմը, ընկերվարութիւնը պարզել է իր աղատարար Դրօշը”...


*) Ֆրանսաւարուական պատերազմն էր, որ հասցել էր Ֆրանսիան հոգեվարբետ:

**) Այդ պատի տակ են հրացանի բռնել Կամմունարչներին և նրա առջև են ընդհանուր ու վիթխարի փոսի մէջ ամփոփւած հազարաւոր դիակները:

Փերենց ԿՕԾՈՒՏԻ ՄԱՆՀԱՅ

Ահա մի անուն, որ մի դրօշ էր—մաջառական անկախութեան դրօշը Մայրաբազար Բուդապեշտը և ամբողջ Անգարիան անհամար պատգամաւորութիւններով մասնակից էին յուղարկաւորութեան լայնածաւալ թափօրին: Աղջ երկիրը սուր էր հագել և 200,000-ի չափ մի բազմութիւն տանում էր մաջառական ազգայնութեան այդ Դրօշը դեպի գերեզման:

Սուդը յարուցիլ էր ոչ մեռնողի անձնաւորութիւնը, այլ անունը, ֆերենց ԿՕԾՈՒՏ կենարօնական դէմք չէր նորագոյն Անգարիայի, ոչ թէ իր անձնական կարողութիւնների շնորհիւ, այլ որովհետեւ իր անմահ հօր անունն



Լ Ա Ղ Վ Ի Գ Կ Օ Ծ Ո Ւ

էր կրում—այդ անւան բոլոր փայլն ու հմայքը: Փերենց ԿՕԾՈՒՏ դրօշակակիրն էր Անկախութեան Կուսակցութեան, որովհետեւ որդին էր հոչակաւոր ողիբուածորին, Լուգվիգ ԿՕԾՈՒՏի Կարող մարդիկ շատ կան Անգարիոյ մէջ, բայց ուղարագրական աւանդութիւններին պաշտօնական կրողը մէկ անհատ միայն կարող էր լինել—”ողիբուածորի” ժառանգը: Այդպէս է հրամայում ժողովրդային հոգերանութիւնը.. Ապշեցուցիչ է անւան “թովքը.. Անոն” որ էմբլէմ էր, խորհրդագնացն, անուն՝ որ մարմացութիւն էր ազգային բոլոր փառքերի: Բուդապեշտը սուր էր հագել, որովհետեւ նրան թւում էր, թէ իր լաւագոյն երազներն էր թաղում գետնի տակի Այդ փառաշուր թափօրի հանգէպ իւրաքանչիւր ունգարացի յիշում էր 1848 և 49 թւականները, ազգային դրօշի հպարտ ծածանումը, հայրենիքի անկախութեան յայտարարութիւնը դիբուածորի բերենով, պատամբական արինալի թռիչքները, ջարդը և նահանջը:

Գոռ, յաղթական կրիւներին յաջորդել էր ցաւագին պարտութիւնը. Լուդվիգ Ալցուտ բանութեան ճիրանեւրեց իր գլուխն ազատեցու համար, փախել էր արտասահման և ապաստան խնդրել ամանեան կառավարութիւնից Խն տարեկան ֆերենցի հետ նո գնաց հաւատեց Փաքք Ախոյ Քիւթահիւ բաղաբռմ (*).

Տարիները յետոյ հայր և որդի փոխագրւեցին Լօն-
դոն։ Յետոյ—Խոսլիա։ Ժամանակը առաջ ստիեց, միա-
հեծան բռնապետութիւնը ջնջեց Աւստրո-Ավստրիայի
մէջ, Հաստաւեց 1867-ի իրաւախոհութիւնը (Ausgleich), որով մաշա՛ Հայրենիքը ստանում էր լայն ազա-
տութիւն և ինքնօրինութիւն Կոչուտ, սակայն, շարու-
նակում էր մալ իր քերենցի հետ դրասահճանում,
չնայած Հայրենակիցների պաշտառքին կոչերին ու յոր-
դորներին։ Դա չէր ուզում իրաւախոհել ու հաշուել
ութրդւեալ Ասոխի⁴ (Հաբսբուրգեան միապետութեան)։
Հետ, նա անհաջա պատերազմ էր յարտարարել միա-
պետին, պահանջում էր լինակատար անկախութիւն իր
Ավստրիայի համար։ և ուխտել էր Հայրենիք չվերա-
դառնալ, քանի դեռ չի իրագործել իր երազը։

Աւելանին հաւատարիմ մնաց մեծ աբոսրականը քառասուն ու հինգ աւրի ապրեց Աւելարիայից դուրս, ատարագիր ու թափառական և իր դիակը միայն վերադարձաւ Հայրենիք։ 1894-ին իտալական Տուրին քաղաքից Լուգվիդ Կօչուտի նշխարները արտակարգ հանդիսաւորութեամբ փոխադրեցին Բուդապեշտու Դագաղին ուղեկցում էր ինքը Փերենց Կօչուտ, որ 45 տարուց ի վեր նոյնպէս առաջին անգամ էր սաք դնում Հայրենի հողի վրայ Ցեղի ունեցան ամբողջ երկրում Հսկայական ցոյցեր ու թափօներ

Լաեց ահարկու Դիբտատօրի ձայնը, որ երբեմն սարսափն էր Հարսրուդեան արքայատօնին: Ա եղջիւռ, եռ-

*) Առջևաների, հնագէս և լեհերի մէջ, թիւրքիան և
թիւրքերը մըշտ մի առանձին համակրտանք են վայելել, չորս հիւ-
այն առաջնականութեան, որ վաղեմի օրերում առ լին անները
ցոյց են տևել թէ մաջառ և թէ լիչ ապօտամբապետների
վերաբերմաք (լեհերին՝ 1831-ի աղէտաւոր ապօտամբո-
թիւնից յետոյ): Այդ համակրանքին, մաջառների մօտ աւել-
լանում է և ցեղային, թէկուզ հեռաւոր, արիւնակցութիւնը:
Անդամ Համբդի օրով՝ մաջառ զեկուամբների շրջանում թիւր-
քական զատը մեծ ժողովրդականութիւն ուներ: Եւ երբ—
1902 թ. յունաւրին—փորձ եղաւ, ունցարական պարյամնութիւ-
չէնքում իսկ, յուզելու հայոց հարցը, մերկացնելու սուլիմա-
նական ոճիրները Հայուստանում, մաջառ հեղինակաւոր գէմ-
քերը և ամենէն առաջ Անկախութեան լուսակցութեան
առաջնորդները՝ Ֆերենց, Կոչուտ և կամ Ապազնի՝ միաբե-
րան յայտարարեցին Գոշշ: Առեւտեան թիւրքի պատշաճու-
սորին: «Մեր բալոր համակրանքը ձեր գժբախտ ժողովրդի
կողմն է, բայց մի ժողովրդ և այն, որ մենք յախտենքըն-
երախտապարտ ենք սամանեան կայսրութեան, որը մեր աղ-
քային ամենամեծ աղէտի միջոցին (1849 թիւն) վեհանձնա-
բար ապօտառան է տևել մեր շարժման առաջամարտիկ հե-
րոսներին»:

կիւզով ու վրէժինդրութեամբ համակած, թոյլ չաւեց
անգամ, որ ունդարական ազատութեան Առաջին
երախառագետ հայրենակիցները արձան կանգնեն Մա-
շառատանի մայրաքաղաքում և այսօր ուղեորը զարման-
քով է արձանագրում այդ պակասը՝ բուդապեշտում
պատելիս:

Հաղպիգին յաջորդեց քերենցը Յազորդեց, բայց
առանց փոխարինելու։ Քաղաքականապէս անփորձ մի
մարդ, միջակ քարոզութիւնների տէր, ամբողջ կեանքն
էլ ապրած հայրենիքից դուրս Ազգը, սակայն, պետք
ուներ նրա անւան և Ֆերենցը սիրով ընդ առաջ
եկաւ ազգին, աւեց նրան իր կախարդիչ անունը, դար-
ձաւ երեսփոխան և պարագլուխ Անկախութեան Կու-
սակցութեան Յետոյ—և մինիստր Հայրը կատարօրէն
բողոքում էր գերեզմանից... Որդին դրժել էր հօր ուխու-
նա արդէն իսկ հաշաւում էր տէրող կացութեան հետ,
ընդունում էր աւարումաջառ երաւախոհութիւնը

Անկախութեան կուսակցութիւնը իրօք նու էլ չեր
ղեկավարում, այլ Ապգանի և ուրիշները ները լոկ ան-
անակոն զեկափար էր Հօր մոլեգին անհաշութեան
(intransigence) տեղ՝ նրա մէջ թագաւորում էր
յարմ որւելու ուժեղ ցանկութիւնը, Եւ ֆերենցը
ու յարմարեց շարունակ, թեր ճանապարհով սահեց
աստիճանաբար մինչև կատարեալ հաշութիւն Հարս-
բորդեան միապետութեան հետ Մի գեղեցիկ օր —
1905 թին —նա ներկայացաւ Այսեննայի արքայական
պալատում Գրանց Լազեֆ թագաւորին, Հայր-Կօչուսը
շարունակում էր գալարւել գերեզմանի մէջ Կա անի-
ծել էր այդ թագաւորին, որ հեղինակն էր 1849 ի
մաջառական Նախաճիրների, նա պահանջել էր գահընկեց
անել այդ թագաւորին

Ցերենց սաստկապէս վարկաբեկ եղաւ. իր հայրենակիցների աշքում, Անկախութեան կուսակցութիւնը պառակաւեց. Արդին ոչինչ չափելացրեց հօր հմայքին և թւում է թէ երէկ, Բուդապէշտի Հանգիսառորու վիթխարի յուղարկաւորութեան միջոցին՝ Անգարիան ողբում էր ոչ թէ որդուն, այլ չօրբ...

Digitized by srujanika@gmail.com

ՅՈՒԶԱԴՐՄԵՐ ԻՑԱԼՎԱԾԱՐ

Մի ցոյց Անկօնայի մէջ, մի ընդհարում ցուցարար-ների ու ստարկանութեան միջև, գնդակների մի տարափ, բանւորների երեք դիակ... Եւ աչա արագ արագ տա-րածւեց արձագանքը և խալիան բռնւեց ըմբռստաց-յան հրդեհով Արքէ՛ աղաղակեց միլիօնաւոր պրօլե-տարիստը Հռօօմւմ, Նապօլում, Միլանում, Տուրինում և ամեն տեղում Քարրիկադներ, կոփեներ, տասնեակներով գիտակներ, հարիւրներով պիրաւորներ:

Այդպէս ե միշտ այդ զարմանալի երկրութիւնը հայծից

մինչեւ հրդեհ՝ մի բայլափոխ է միայն Ցեղային խառն ւածքն է զօրաւոր ու ցասկոտ. կրթերն են միշտ վառ և տիրապետութիւն Աւելացրեք յաւիտենական ու յեղափոխիչ պատուհանը — աշխատաւոր զանգւածների համատարած թշւառութիւնը, որ այդ սքանչելի երկրի մէջ մի առանձին, ողբերգական բնոյթ է առնում և որ միշտ մնուցանում, պահպանում է ըմբոստ տրամադրութիւն, յեղափոխական մժնութարաւ:

Խոսլիան մի զարմանալի համագրութիւն է գեմակրատիկ գաղափարների և բռնութեան ու սրբութեան սիստեմի վաղաբական ռէժիմը համեմատաբար մեղմ է, շատ աւելի մեղմ, քան օրինակ գերմանիայում ուարչամենուր — ընտրած ընդհանուր, հաւասար ձայնատութեամբ — տէր է երկրի մէջ և թագաւորը Եւրոպայի մեղմագոյն վեհապետներից է, միանգամայն յարգող Ասմանագրութեան և ժողովրդական ներկայացուցչութեան իրաւունքների:

Ապային, Խաղիայում — աւելի բան որեւէ այլ տեղ — շեշտում է նորագոյն անտեսագիտութեան հռչակութիրոցութիւնը՝ որ քաղաքական ամենալայն ազատութիւններն անդամ շեն կարող արգելել անտեսական հակամարտութեան չարիբները, կապիտալիզմի աւերածը։ Անդունդը շատ է խոր հարուստի և աշխատի, հողատերու փողատէր փոքրամասնութեան և ընչազուրկ աշխատաւոր մեծամասնութեան միջև —և այդ անդունդից ահամերթ ընդ մերթ դուրս են ցայտում ահաւոր կայծեր, որ անմիջապէս բողավորում են և հրդեհում երկիրը։

Եղան ցնցող, արտասւելի տեսարաններ ժողովրդական վերջին յուզումների միջոցին։ Առաջ բերենք մի բանիսի նկարագրութիւնը *Corriere della Sera* ից. Թղթակիցը Ա Ն Կ Օ Ն Ա Է, շարժման սկզբնական օճախում Ա Հ Ա թէ ինչպէս է նա նկարագրում աշխատաւոր ժողովրդի սուզն ու ցասումը.

Պատայ Անկօնան. կույարանը բանւած է զօրքերով: Ոչ մի հառը, ոչ մի տրամփայ, ոչ մի սպլյակ անգամ: Ծուրջը ըստ լուսնին է: Բայցը մազաղիններն ու խանութները փակ-փակ է և փառան ու հեռագրատաւոր: Խանութների ճակարն կարգում են: Փակւած է ի նշան բողոքի՝ պրօյեւարական ուղղի պատճառով: Piazza Roma—ցւցաբարների կենտրոնացայրը է: Հաւաքւած է ահադին տմրիսի Ամենքի ուշա-դրութիւնը գրաւում է պատճերին փակիցրւած մի հսկոյ մա-սիֆեստ, որի տակ ստորագրած են Ներիտասարդ բնիկերի պա-րականների միացիւն: Կ Անկերվարական խանունց խումբը: Կարա Աջ խուսում է ընդհարում ու բանւոր զահերի մա-սին և ներկայացւում է գեպը, որպէս „սատիկանութեան արհամատածւած ու վայրագ յարձակում”... Մասիփէստը հրաւիրում է բաղաբացիններին բողոք բանու-ու կտուագարու-մեան ուժու և կոռափակում է աւո սոս եռու:

...Տէւր ձեր արցունքը դոհերին և ազգայնչէ՛ք կոտորածի հեղինակներին, բայց լաւ յիշեցէք, որ այդ կոտորածի առաջին պատասխանատվուն պետութիւնն է, որի բանութիւնը պէտք է խօսանեն, ոչ նաև թե ամբա՞...

Ահա և Բողոքի միջնագի Բացօդեալ ամբոխի շուրջը
խմբած է բազմահազար ամբոխի Ակուռմ ևն ճառերը
Աստորածը չպիտի թողնենք անպատիժ— ձայնում / Են բոլոր
Հռեռորդները, ոցին լիսա, անիշխանական և պարզ հանրա-
պետական Մէկը բացականչում է.

— Անօդուաւէ, բաղաբացիներ, բողոքն ու վայնասունը կօնկրետ մի քայլ պէտք է անենք մեր, եթէ կուզնէր վրէծ առել զոհերի համար. պէտք է անցնենք բարբիկետների վրայ, զինենք ժաղավագին և զինաթափանակ անենք թշնամունք

Մի ուրիշը յայտաբառում է

— Ընկերնե՞ր, նախ լիտակատար ազատութիւնն է, որ պիտի
Նամակը պրոֆեսորիատի համար Մենք գտնուում ենք մի
երկրորդ կամաց այլի՝ նախօրենակին:

Ապա խօսում է Մ ա լ ա ս ե ս ա ս, հռչակաւոր անիշ-
խանականը.

— Պառք արդարութիւն երբէք չպիտի վայելէք, մինչեւ որ
ձեր ձեռքով չկուեք այդ արդարութիւնը, Երբ գուք կը պատ-
րաստէք անհրաժեշտ միջոցները և արծիճին արծիճով կը
պատասխանէք, այն ժամանակ և կ'ամսոքէք ձեր վիշտը, կը
պահանջէք կատարեալ ազատութիւն: Յիշեցէք, որ կատրածի
պատասխանառուները միմիայն բիրս ուստիկանները չեն. մե-
ծագոյն պատասխանառուները պէտք է վնատրել առելի բարձր
և այնտեղ է, որ պէտք է հարածեր...

Ճաղապը վերջանալու վրայ է. ասրէն բեմ է գոլիս պարամենափառ անդամ՝ Պիրոցինի.

— Նախ քան ցրելը, ասում է նա, պէտք է կօնկրետ մի որոշում բնուածել. Ի՞նչ կը պահանջէր արդ եօթ.

— Յեղափոխութիւն, գոռում են ամբոխից:

Դարձելով հնչում է Արևույնի ձայնը

— Յեղափոխութիւնը կը դայ, ինքնին, եթէ

բաստ գանձիք և զիոնապ օգտիլ առիթէն...
Ահա, վերջապէս, զահերի յուղարկաւորութիւնը Հսկայա-
կան բազմութիւն, հարիւրաւոր դրօշակներով, պատկապարզ
ու ծաղկապարզ գագաղներ, հարզազաների լոց ու շիւան...
Տեսորանը սրաւաշորժ է: Եւ ի՞նչ ահաւոր մակագրութիւն-
ներ պատկների վրայ... Մէկի վրայ նկարւած են երեք ռումբ
ու մի առաջնամկ և գրւած են այս բառերը.

— Ապօրդաստաններին — պրոլետարական վրէժիանդրութեան արք խորհրդականներին:

Ահա և մի երկայն ժամանեն, որ կրում են երկու մաս-
նակներ. վրան զբանը է խոչը տառերգը. — Իմ թանկապին
նշանած ի՞ն... Ապահանձ բանուորներից մինչը, երիտասարդ կա-
զաշին, նշանած էր և մի բանի օրից յետոյ պէտք է
առնել մասնաւու.

Թափորը հանդարս շարժւում է գեղի հանգստարան։
Տեղի է անենում մի մըջադէպ Առաքայ պատշգամի վրա
կանցնած է մի պարոն, գլխարկավ և սիդարը բերնին դիտում
է թափօրը Ժողովուրդը համարելով այդ՝ անվայն մի ցուց
պարօնի կոպմբց, զուռում է և պահանջում, որ զինուրկը նետէ
կամ թէ հեռանայ. ապա երիտասարդ աշխատաւ որների մի


μανικές φρούριοι της απόστολης Αγίας Ειρήνης στην πόλη της Κωνσταντινούπολης. Οι οποίες είναι γνωστές ως Τούρκικα ή Βυζαντινά φρούρια. Τα πρώτα φρούρια της πόλης ήταν τα τουρκικά φρούρια της Κωνσταντινούπολης, που κατασκευάσθηκαν από τον Οθωναίο αυτοκράτορα Μωάδη τον 14ο αιώνα. Τα δεύτερα φρούρια της πόλης ήταν τα βυζαντινά φρούρια της Κωνσταντινούπολης, που κατασκευάσθηκαν από τον Βυζαντινό αυτοκράτορα Ιωάννη Καπετάνη τον 13ο αιώνα.

ուշաթափւում են, պանիկն անցնում է շուտով և թափորը նորէն շարունակում էր բնօթացը: Չ'իմացանք, թէ ո՞րտեղից կրակեցին և ինչո՞ւ:

Դժան աեստրաններ՝ գրեթե ամեն տեղու Մի շարք քաղաքներում տեղի ունեցան բարրիկադային կռիւներ: Համերաշխութիւնը օրինակելի եր ամբողջ թերակղզու աշխատաւոր ընդհանրութեան մէջ Վերջինը յաճախ գրոհ էր տալիս ոստիկանութեան դէմ, ատրճանակներով զինւած և ինքն ևս հարւածում էր Սակայն, բնականաբար, ոյազթանուկը՝ ի վերջոյ դարձեալ տերերի կողմէ է, որոնք ունին իրենց ձեռքում՝ կապիտալիզմի երկու մեծ ուժը—բանակ և Դրամ...

* * *

Մենք առկաւին առիթ կունենանք անդրադառնալու այդ կացութեան և նրա յարուցած ուշագրաւ պրօր-ընթերի վրայ հատիկան, չնայած խօսքի, մամուլի, գու-



Զ ի պ ր ի ա ն ի

մարումների իր ընդարձակ ազատութիւններին, քաղաքական մի Վեզուվ է, մի հսկայ հրաբուխ, որ թերեւ վերապահում է ցնցող անակնկալներ՝ նոյնիսկ մօտիկ ապագայի համար: Սօցիալիզմը այսակ ևս սրարշանակումներ է անում, սօցիալիզմի հետ և անտրեխզմը, ընդհանուր գործադուլի և քաղաքական ու սօցիալական վերիպարումի գաղափարը: Այդ գաղափարի կենդանի և հզօր մարմացումն են երկու մոլեգին յեղափոխականներ, մինը ընկերվարական-սինդիկալիստ, միւսը կարմիր անիշխանական, մինը պարլամենտում, միւսը Անկօնայի մէջ—Արտուրո Լարրիո և լորրիկօ Մալատեսա: Այդ վերջինն էր, որ պատրաստեց հսկամիլիտարական ցոյցը Անկօնայում և բռնկեցրեց ներկայ

հրդեհը և բրկուսին քաջալերում և շարունակ խթանում է—իր թեաւոր, հրաբխաշունչ յօդւածներով — հին, մեծանուն գարիբալդեան ռազմիկը, Ամ ի լ կ ա ր է Զ ի պ ր ի ա ն ի, որ առկաւին մնում է իր կամաւոր արսորի մէջ, Պարիզում, շնայտ որ մի քանի անգամ և Ճնշող մեծամասնութեամբ պատգամաւոր է ընտրւել իր հայրենիքում:

Լուգվիդ Կօշուտի պէս՝ նա ել ուխտել է ոսք չգնել հայրենի երկրում, ուր առկաւին կանգուն է իրեն համար ատելի միապետութիւնը... Եւ ծերունի ռազմիկը, որ վետերանն է Եւրոպայի յեղափոխականների, փողհարում է անդադար իր պարիզեան աբսուրավյուց դէպի Միլան, Տուրին, Հռուս, Ֆենօվա, Կապոլի, բոցագու կաչերի մէջ յարդորում է ժողովրդին՝ ոտքի կանգնել և թօթափել միապետութեան ու կապիտալիզմի լուծը: Ամեն մի նոր գործագուլ ընդհարում ու բարրիկադ աւելի է հրահրում նրա յոյսերը Շատ է, աւազ ծերացել Գարիբալդիի թիկնապահը, չի տեսնի նա սօցիալական և նոյնիսկ քաղաքական հանրապետութեան արեւը, Կօշուտի եղերական վախճանն է նրան վիճակւած... Զիպրիանիի գիտին է, որ շուտով կը հիւրընկալէ չաղատագրւած Հայրենիքը:

Մ. Պ.

ՕՏԱՐ ԿԱՐՅՈՒՔՆԵՐ ՝ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ *)

Պառուլ Ռուբրախ, յայտնի գերման արևելագետը, որ մի քանի անգամ շըջան է արել Հայաստանի մէջ, հետեւայոդւածն է հրատարակել Deutsch-Afrikanische Korrespondenz-ի մէջ:

”Թիւրքիոյ և պետութիւնների համաձայնութիւնը ու էֆօրմների վերաբերմամբ՝ ունեցաւ իր նախապատռաթիւնը, և Պօլսի վարիչ շըջանները վերջին վայրկեանին—Եւրոպայի գործակցութիւնը հեռացնելու համար— գործեցին համաձայնութեան գալ նոյնիսկ հայերի հետ: Մի կողմից նրանց խոստացան բարելաւել հայոց կացութիւնը, միւս կողմից փորձեցին սպառնալիքներով վախճանել նրանց: յայտարարեցին, որ եթէ հայերը պնդեն իրենց հիմնական պահանջի վրա (եւրոպական կօնտրուի վերաբերմամբ), կարող է պայթել զին որական ապրաւամբութիւն և հայկական ջարդ:

”Անշուշտ, երիտասարդ Թիւրքերը հեռու են իրենց սպառնալիքը իրագործելու մոքից, նրանց նպատակն էր միայն սարսափեցնել հայ վարիչ շըջանները և ստիպել նրանց հրաժարւել եւրոպական գործակցութիւնից: Եւ եթէ անգամ երիտասարդ Թիւրքիոյ պատասխանառու մարդիկ իրաք յանային ջարդի ծրագիր, պէտք է դիտել

*) Տես „Դրօւակ“, № 4:

ռալ, որ այսօրւան հայերը այլ ևս նախկինները չեն. նրանք այլ ևս զուրկ չեն պաշտպանելու միջոցներից, ինչպէս 1895—96-ին, եթէ Թիւրքերը նոր կոտորած սարբէին, մենք հանդիսատես կը լինէինք մի անզոր պատերազմի, կեանքի ու մահւան ճակատամարտի՝ հայ ու Թիւրք տարրերի միջև։ Հարկաւ, հայերը սոսկովիրեն կը տուժէին, բայց նրանք կը հասցնէին Թիւրքերին անգարմանելի հարածներ... և հայ ժողովրդի յուսահատ կոխիը կը յարուցանէր անխուսափելիսը եւրոպական միջամտութիւն։ Արդէն իսկ հայերի մէջ կայ մի հոսանք, որ համոզւած է, թէ միմիայն այդ արիւնոտ ձամբու վրայ հնարաւոր է ռէֆօրմերի իրականացումը

Հայ ազգեցիկ անհատները հաւասացած են, որ իրենց գէմ ուղղած սպառնալիքը գալիս է երիտասարդ Թիւրքերի բանակից։ Հայ արմատական ո՞րաշնակցութիւնն կազմակերպութիւնը, որ ամբողջ Արևելքում անուն է հանել իր կորովի և վճռական ընթացքով, անշապաշտասիանեց ժէօն-Թիւրքական այդ սպառնալիքին Աւանենալով իր արմատները ազգի թէ մտաւոր շրջաններում և թէ լայն ժողովրդային խաւերի մէջ, այդ կազմակերպութիւնը կարելի է ջնջել՝ միայն ամբողջ հայ ցեղը բնաջնջելով։ Մինչ Թիւրք ո՞ւժիհատականները՝ կազմում են լոկ օլիգարշիկ մի խմբակ, որ իշխում է զինուրական ոյժով և տարածում է իր իշխանութիւնը գրեթէ միայն մայրաքաղաքի վրայ Եթէ հայ յեղափոխական կուսակցութիւնը կոտորէ ո՞ւժիհատի մի շարք պարագլուխները, այդ հանգամանըը կարող է շատ վտանգաւոր կացութիւն ստեղծել ամբողջ Եթիհատական կազմակերպութեան համար, բանի որ կան հրապարակի վրայ և ի՞մ թիլափականները, որոնք ձըգտում են վրէժխնդիր լինել 1909-ի և 1913-ի կախաղանների համար. կան, վերջապես, և պառաւ Թիւրքերը, որոնք առաջինների հետ կը սպասեն պատեհ վայրկեանի՝ հարւած տալու Երիտասարդ Թիւրքիային։ Թիւրքերի այդ բաժան-բաժան վիճակի հանդեպ՝ հայերն այսօր համեմատարար միաբան են։

Դիացի այդ, Իթթիհատը միշտ պէտք կունենայ Հայ ո՞ղջային կուսակցութեան աջակցութեանը, որի շնորհիւ միայն նա կարող է ստեղծել երկըն մէջ մի ընդարձակ կազմակերպութիւն, ներքուստ ամբողինդ և ճիւղաւորւած զանգաւծների մէջ։ Հետևաբար, ժէօն-Թիւրքական տեսակետից իսկ ինելացի կը լինէր լուծում տալ ռէֆօրմների խնդրին, համաձայնելով հայերի հետ։ այդ ռէֆօրմների իրագործումը այժմ արդէն գարձած է անխուսափելի։

Ո՞րաշնակցութեան պարագլուխներից մի բանիսը միայն ծանօթ են հասարակութեան։ Մինչ, ընդհակառակը, Իթթիհատի բոլոր շէֆերը մայրաքաղաքի մէջ են և ամենքը գիտեն նրանց։ Այնպէս որ, եթէ գիմեն սպառնութիւնների, հայերը չեն, այլ երիտասարդ Թիւրքերն

են, որ կ'ենթարկուն ամենամեծ վատնգին Բաւական է յիշել ո՞րաշնակցութեան կիրառած առկոտիկը կովկասում 1905-ին, ընդդեմ Թիւրք բէկերի, որոնց ուսւկառագարութիւնը գրգռել ու թափել էր հայերի վրայ Այդ տակտիկը նոյնքան ազգու էր, որքան և պարզաշնակցականները կոտորեցին շարժման դժբաւոր դըրգիշներին և այդպիսով կանգնեցրին թաթարական գաղանութիւնները։ Այդն տակտիկը 1909-ին, Թիւրքաց Հայրածանում, Աւանայ վիլայէթի մէջ Քիւրդ առաջնորդ Եազուպը բռնաբարած լինելով մի հայուհի՝ ենթարկւեց շուտով հայերի յարձակման և ջնջեց իր ամբողջ խմբով։ Քրդերը սպառնացին վրէժ առնելի ո՞րաշնակցութեան կօմիտէն խկոյն պատասխանեց, հրատարակելով անունները բոլոր գաղանի քիւրդ պարագլուխների, և սպառնաց բոլորին կոտորելի եթէ մի հատիկ գաշնակցական սպառնուի։ Այդ պատասխանի վրայ բըդերը զգաստացան և զսպեցին իրենց թափը։ Արևելքի մէջ մարդիկ վեճում են աւելի զօրաւոր փաստերով, բան Արևմուտքում՝

ՊԱՌԻ, ՌՈՌԱՋԻ

Թ Ե Բ Թ Օ Ե

Ի Մ Բ Ա Ն Դ Ը

Մ Ա Ս Խ Ա Բ

II

Ա Ռ Ա Զ Ի Ն Օ Ր Ը

Լուսաբաց եր, երեխ գրսում արե էլ բարձրացաւ, այդ նկատում եր մեր փոքրիկ լուսամուտից թափանցող ցոլքերի գոյնից, բայց մեզ մօտ գրեթէ գիշեր էր գարձեալ Եկան լամպը գուրս տարան, մեր զնդանի շորս անկիւններում վերստին խաւարը թագաւորեց։ Միայն վերում, ուր աւելի հեշտ էր հանում գրսի աղօտ լոյսը, ես կարողանում էի աեսնել պատերի մոխրագոյն ծեփը և ինչ որ խազեր Սարբազ-Խէջօն կուցաւ այդ խազերի վրայ, որ ըստ երեսոյթին եղունգներով էին գծւած։

Քեամբախները բան են գրել, կարդալ չի լինում. ասաց նա պշապշալով։

Մօտեցայ և ես. մեր գժրախու նախորդների յետին հառաջանըն էր շանգուտծ այդաեղ յուսահատների եղունգներով, մահապարտների վերջին սրտապատռնէը, նրանց պարտած անզօրութեան յաւիտենական աղաղակը, որի մարող արձագանքները տակաւին դողդողում էին այս զարհուրելի զնդանի մութ խորչերում։

Դինձ առնում են կախազան, այսօր լուսաբացին, գրում էր մէկը յետոյ տարի, ամսաթիւ։

ո՞Մնա՞ս բարի ազատութիւն ու ժողովուրդ, հեծեւ ծում էր մի ուրիշը, ինձ կախում են դարձեալ հետևում էր ամսաթիւ ու առեթիւ:

— Խէջօ՛, ասացի, կախաղան բարձրացածների թողած արձանագրութիւններ են, իմ ընկեր:

— Ա՞յս, քեամբախներ, ապա կարգա՛ բոլորը:

Կարգոցի բարձրածայն աղնիւ Խէջօֆի կնճոռու ճակատը Ել աւելի մուլլեց, բաշ ընկաւ գաժան խոչերի ծանրութիւնից, սովորական անհոգ, ժպտուն սրախօսութիւնը մարեց շրթունքներին, նա յետ յետ գնաց, թիկունքը պատին տւեց ու մեաց լուս:

Դուռը բացւեց շառաչիւնով. ներս եկա մի ծառայող բանդարկեալ և լուելեայն ցած դրեց յասակին մի աման տաք ջուր, ծառարողը ջուրս գնաց դուռը կրկին փակւեց մեր վրայ: Իրար նայեցինք, չհասկանալով այս առ ջրի նշանակութիւնը:

— Քեամբախներ, չայի ջուր են բերել, երբ ո՛չ շաքար ունինք, ո՛չ չար:

Եւ արդարեւ գո մի կատարեալ հեգնութիւն էր ո՛չ բաժակ ունինք, ո՛չ թէյ, ո՛չ շաքար ու մեզ եռացած ջուր էին բերել ըստ բանդային կանոնագրութեան:

Վերսախն շարւեցինք պատերի առկ, բաղցած, դազաւած ու անքանութիւնից տանջած, դողդոջուն մարմիններով. հաճոյըն ու ցասումով էինք նայում ախորժ դալորշի արձակող այս տաք ջրի ամանին, որ կարող էր մեզ մի փոքր կազդուրել գաժան գիշերւայ տանջանքներից յետոյ, բայց ի՞նչպէս...

Ո՛չ թէյ, ո՛չ շաքար:

Ի՞նչ միտք ուներ բանդի այս արտառոց խնամքը, մեր ախորժակները գրգռելու, մեզ Ել աւելի տանջելու համար արդեօք, Ի՞նչ վաս հեգնութիւն մեր ցաւոս վիճակի...

— Քեամբախն ուուսի խելք է, առանց չայ ու շաքարի տաք ջուր:

— 2է՛, Խէջօ, բանդային կանոն է, առաւուները թէյի ջուր տալ բանդարկեալներին:

— Բա որ չայ ու շաքար չկայ..

— Բանդի կանոն է:

— Քեամբախն մեայ կանոնը, ասում եմ ուուսի խելք է, լոից էլ նավօգկի կուզեն, իսկ մեզ տաք ջուր են աւել առանց չայ շաքարի:

Ու մեր անզօրութեան մէջ բըքչացինք:

Էցի մեր Սարբազ-Խէջօն արամագրութիւններս կարողանում էր բարձր պահել:

Դուռը կրկին շառաչիւնով բացւեց.

— Ոսքի, լուեց մեր վերակացուի բիրտ, խռպոտ ձայնը:

Կներս մտաւ բանդապետի առաջին օգնականը, այն մարդակերպ հրէշը, որ երեկոյեան մեզ բանդային տաք:

բազ հազգրեց, որի դէմքի վրայ այնքան ամարդ ու գարց վասութիւն կար:

— Ո՛չէկ, երկու, երեք, չորս, համարեց նա մեզ, մատիտով նշանակեց թղթի վրայ, ապա դարձաւ Սարբազ-Խէջօին:

— Խէջօ՛, են ոտներդ ցղթայած:

— Զգիտեմ, էկատերինոգարեց ճամբայ, դնելիս, շրդթայցին ինձ և ընկերներիս:

— Ընկերներդ ուր են:

— Զգիտեմ գիշերն ուր տեղաւորեցին Ար խնդրեի պ. օգնական, հանել տալ այս շղթաները:

— Լաւ, կը հանեն, չես մեռնի:

Խէջօն լուեց:

Օգնականը պատրաստում էր դուրս գալ, երբ եւ առաջացար:

— Պ. օգնական, ասացի, սա՝ ինչպէս գիտէք մահապարաների զնդան է, ուր մենք նետած ենք բաղցած, առանց ծածկոյթի, առանց որևէ տեղաշօրի, անգամ մի կոոր տախտակ չկայ, որի վրայ նստենք: Որչափ մեզ յայտնի է, մենք տակաւին ո՛չ դատւած ենք և ո՛չ դատապարտւած: ուզում ենք յուսալ, որ մահան պատիժ չի սպասում մեզ, եթէ մինչև իսկ դատապարտւենք: Խնդրում ենք ասել՝ իմանալ, ինչու ենք մահապարաների զնդանում և այս անհանգույթելի վիճակում:

Օգնականը լուեց այս բոլորը ակնյայտ սրտնեղութիւնով, առամեներն իրար վրայ սղմած, նայեց ինձ ուրիշ գլուխ մի վատ, թունոտ հայեցքրով, ապա դուրս գնաց, թողնելով առանց պատասխանի:

Դուռը կրկին փակւեց:

— Լաւ, ասիր, վրայ բերեց Խէջօն, ամա էս անիծւածներին որ արդար բան ես առում, ինչպէս հօրը հայհուս: Քեամբախն նախօգկիներ:

Վերսախն քըքիջ բարձրացրինք, որին անմիջապէս յաջորդեց ծանր լրութիւնը խօսելիք չկար: Դրութիւններս դաւնում էր անհանգույթելի: Ինձ պահում էր մի յուս, որ հաստատւած էր պարզ արամարանութեան վրայ: մեզ հետ կատարւածը այնքան արտառոց, այնպէս հրէշաւոր էր ու անմիտ, որ ինձ թուում էր անհնարին այս դրութեան յարատեռումը Ինչքան և վատ կարծիք ունենայի ուուսական բանդային կարգերի մասին, անհնարին էր թուում ինձ այս աստիճան գուհիկորէն վրան բաց անիրաւութիւնը, այս ամարդի բարբարոսութիւնը դէպի բանդարկեալները, որոնք դատապարտւած չեն, որոնք մի երկու ամիս յետոյ՝ կարող են արդարանալ անգամ ուուսական մեր օրերի ծամածուած օրէնքներով:

Այսպէս էի մածում ու ականջս ձայնի էր, թէ ահա՝ ուր որ է դուռը նորից կը բացւի, մեզ կը հրաւիրեն դուրս այս գարշահու խցից և այլ անեղ կ'առաջնորդեն, գէթ ծածկոց ու որևէ սնունդ կը առն բաղցից ու ցրտից չմեռնելու համար:

Նախասենեակում անց ու դարձ էր անում միայն մեր վերակացուն. Նրա վատ աչքն էր փայլում մեր դրան ապակեծածկ անցրի վրար հնչպէս, ո՞ւմից իմաստ, թէ ո՞ւր են, ի՞նչ եղան մեր միւս ընկերները, ո՞վ է արգեօք մեր հարեւան զնդանում և միւսներում, որոնք բարորն էլ բացւում են մի ընդհանուր նախասենեակի վրայ:

Քիչ յետոյ, ստկայն, նախասենեակում ուսնուայները շատացան ու խեղդած զրոյց լուեց հայերէն թուանք դեպի դրան անցրը: Այս, նրանք էին, չորս հոգի մեր ընկերներից — Յ. Արդ, Մ. Նալբա, Լ. Մող, որոնք դուրս գնացին վերակացուի բիրա հրաժաների տակ: Սա առաջին սփոփիչ յայտնութիւնը եղաւ: մեզ համար գիշերւանից սկսեալ, շատ չնշին փաստ անցուշու — բանի որ խսասկցել: Էսոր տալ շատ դժւար էր, բայց էլի սրտապնդիչ մի բան կար ոյն դիտակցութեան մէջ՝ թէ մեր հարեւան զնդանում մեր մատկէ լընկերներն են:

Դրանը կպահ մնացինք, մինչև որ նրանք յետ եկան դրսից և չնայելով վերակացուի բոլոր զգուշութեան ու խստութեան բարձրաձայն հազորդեցինք, թէ ո՞վքեր են իրենց հարեւան Յայտնեցինք նաև, որ բաղցած ենք նրանք ասացին, որ հաց ու պանիր ունին և պիտի աշխատեն մեզ էլ բաժին հացնել վերակացուի միջոցով:

Լուրը շատ լաւ էր. մեր զնդանում նոյնիսկ ցնծութիւն տիրեց: Քիչ յետոյ մեր դուռը նորից բացւեցայս անգամ դուրս գալու հերթը մերն էր:

— Տասնեհնգ րոպէ ունիք ձեր բնական պետքի և զրուանքի համար, չոր ու անողորմ շեշտով ասաց վերակացուն:

Քառանեշորս ժամում տասնեհնգ րոպէ միայն օդի մէջ. Ճար չկար, պէտք էր համակերպիլ Դուրս եկանք աշխատելով այդ կարճ ժամանակում որբան կարելի է շատ շարժութեր կատարել, ցատկել, վազել, սարմարագ անել: Տարարախտարար այդ էլ էր արգելած, մենք պարաւորեցինք ուղարկեր շարանով իրար յետեր գտույթուններ գործել ու միանգամայն լուռ:

Այս էր կոչում զբոսանք նօֆշերկասսի բանդում:

Բակում ոչ որ չկար այդ գժուխք բակը, որ գիշերը դիտել չենք կարողացեր: Բանդը գանում էր մի բլրի զառիվայր լանջին: Մեր զնդանը զառիվայրի հենց կատարին էր: Մեզնից վեր երկում էր բլրի կատարը, ուր անց ու դարձ էին անում ազատ մարգիկ: Այնտեղ պիտի կարողանայինք ճանաչել մեր բարեկամ ազգականներին, եթէ երեւային նշան անել, խօսել սակայն թուում էր անհնարին: Մեր իւրաքանչիւր շարժումին հետեւում էին վերակացուները:

Մեր զնդանից վար՝ դեպի մուտքի դուռը, զառիվայր բակի այս ու այն կողմ անկարգ ու անսխատմ շարւած էին ոյլ շինութիւններ, ամենքն էլ լցուն բանդար-

կեալներով, որովհետեւ ամենքի ուսաջ հսկում էին հրացանաւոր կօզակները: Մի հրացանաւոր վերակացու հրակում էր արտաքնոցը, ուր ուշացողը ուզգորաբար ենթարկում էր ամենատեսակ կոպառիթեան: Հրացանի կոթը յաձախ էր իջնում փորացաւով տառապող հիւսնդների թիկունքին բնական պէտքերի ընթացքում: Բակի աջ ու ձախ կողմերում բարձրանում էին երկու բրգաձեւ և առանց լուսամուտի շնչերը: — Պրանցից մէկը պահեստ էր մեր զգեստների, միւսը՝ խոնաւ ու խաւոր կարցերն էր, ուր նետւում էին ամենաշնչին անհնագանդութեան համար բանդարկեալները սրերով միայն հաց ու ջրով և միանգամայն զուրկ որևէ ծածկոցից, խոնաւ գետնի վրար:

Քոլորովին վարում՝ մուտքի մատ բարձրանում էր բանդի եկեղեցին և նրանից աջ ու ձախ ինչ որ արհեստանոցներ, ուր աշխատում էին տաժանակիր աշխատանքի գտապարտածները:

Աւ հեռուն հարթավայրն էր ձգւում, ուսւական ծռվածաւալ ստեղները, համբ ու մալլ, ինչպէս ուսուոգին: Ցեղ աեղ երկում էին գիւղեր, հատ-հատ խըրձիթներ ծուխ էին արձակում: Երկում էրն հողմաղացներ, մէկերը երկնքի առաջ բացած ազօթողի կեցւածքով, մի մուժիկ քշում էր իր միամի սուլլակը աշխան գեղին գաշտերի միջով: մի խումբ կանայք ու տղամարդիկ հանգարտ գնում էին գեպի բաց հեռուն, ասեա աննպատկի, այնպէս ինչպէս միայն ուսու մարդը գիտէ գնուք:

Բանդին բոլորովին մօտիկ երկաթուղու գիծն էր անցնում: ահա և զնացքը շագեմերենան թռաւ փնչալով և նրա յետեկոց վագոններ, լցուն ճամբորգներով, որոնք գլուխները լուսամուտներից հանած՝ նայում էին բանդին եւ այդ բոլորը թռում է անհասանելի երազ: Աւ յետոյ՝ վիրաւորական ասեմ, թէ թշնամական մի բան կայ անազատ կեաներում տառապողի համար, կեանիր արդ անհոգ եռ ու զեռի մէջ վիրաւորանք է թռում, որ աշխարհը գեռ կարող է իր սովորական ամենօրեայ հոգսերին անձնատուր լինել: երբ ինքդ այդքան զժբախտ ես, այդքան մոռացւած: Այդ վիրաւորանքի զգացմունքը երբեմ այնքան կիզիչ է դառնում, որ բիչ է թռում մարդ ճշաւ ու կեն, այսաւդ անկարգ առու կարողացները մէկներու առաջին կարող է դառնում այս կարողացները, այս կարող է մուժիկները, որ գնում են, գնում են մոլար ցաշտերով ու չգիտես ուր:

Գնացքն անցաւ թողնելով մութ ցաւի՝ ասեմ, թէ տաելութեան զգացմունք մեր հոգում, և սակայն՝ այնպէս կ'ուզէինք, որ էլի գային նորանոր գնացքներ, էլի անցնէին շաշելով, մարգիկ սլանային թէկուզ անտարեր գեպի մեր տառապանքը: Հէ՝ դա գարձեալ ազատ կեանքի մի:

կոսորն էր, մի երազ մեզ համար, թեկուզ անհա-
սանելի:

Ակնապիշ սպասում էինք նոր գնացքի, ծիր նոր
ողորուն էինք փնտրում ու հայեացքներս կորչում էր
հեռու ստեպներում, ուր մատիկներն էին բայլում:

— Ամիրնո՞*), լսեց յանկարծ մատքի առաջից, բոլոր
վերակացուները բակի զանազան մասերում կրկնեցին
նոյն սաստը, որպէս արձագանքներ ու անշան էր, թէ
մեծաւարն է գալիս, զլխարկները պէտք է հանել: Կերս
մտաւ բակը մի ծերունի, միջուհասակ, գիրուկ, ածիլած
դեմքով, կապոյտ, խորամանկ ու նենդ աչքերով, հայեացքը
ոտքերի առաջ, բայց իրօք շուրջը նայելիս գող կատուի
պէս: Իւ մինչգեռ բակի այս ու այն կոզմում ցրած
բանդարկեալները զլխարկները հանած՝ սպասում էին,
ուստական բանդի արժանի զլխարուը, թեքւեց մուտքի
կողքի անկիւնը, յատուկ շինած աեղում և ամենայն
հանդարտութեամբ սկսեց միզել: Իւ բանդարկեալները,
որոնք այդ վայրկեանին անցնում էին այդ անպատճառ
ծերունու յետեից, այնու ամենայնիւ հանում էին գըլ-
խարկները յարգանք առլու ուստական միզող իշխա-
նութեան այս արժանի ներկայացուցչին Եւ ո՞չ մէկը
այդ ուսւ հօսի մէջ, որ ըմբռուտանար այդ աստիճան
յանդուզն, անպատճառ ստորացումի, այդ անսանի վի-
րաւորանքի գէմ:

Ուստական ոգու անհուն հնազանդութեան, նրա սպ-
շեցուցիչ ստրկումառութեան, անծայր համբերութեան
չափը անսնելու համար՝ պէտք է լինել ուստական բան-
գերում, դիմուլ ուսւ բանդարկեալի կրած ամենօրեայ
անարգանքները, պատիժները, զրկանքները, ծեծը և այլ
անտանելի վիրաւորանքները: Անկասկած՝ ամենից դժւա-
րինը, ամենից տրագիկականը բանդային ըմբռուտութիւն-
ներն են, որոնք գրեթէ միշտ վերջանում են միտնգա-
մայն անմեղ բանտարկեալների կոտորածով, բայց ըմբռու-
սովին, արդար ու բաւու զայրոյթի ընդունակ խառնւածքը
անկարող է հաշւի առնել հետեւաները իր գործողու-
թեան: Եւ այդ բողոքով, ցասումից գոզդողացով խառ-
նւածքն է, այդ կատաղի ու արդար խիզախումը վասնդի,
որ պակասում է այդ համբերատար, այդ ծով ժողովրդին,
այս արտասելի թերութիւնն է կարելի դարձնում, որ
մի զգեւի ճիճու, ինչպէս այս ծերուկ բանդապետը
լրրորէն միզի մարգկային արժանիքի վրայ Յետոյ, իմա-
ցանք, որ քա բանդապետի ամենօրեայ սովորութիւնն է
տարիների ընթացքում և գեռ ո՞չ մի ուսւ բանդար-
կեալ չի համարձակել բնական պէտքը հոգացող լզիրը
բանդապետի յետեին պահանջած յարգանքը, մերժել
և գլխարկ չհաներ:

Այս խոհերը դառնում էին զլխովս մեր զրասնքի
ժամին, ես այլ ևս անու շադիր էի դէպի բանդի բակում

անցած դարձածը, բայլում էի գլուխս բաշ ու ընկճառ
երբ առջեիցս զնացող ընկերս իս... կամացուկ ասաց:

— Ես բլրի վրայ նկատում եմ եղբարս, նայիր չե՞ս
գանում, որ նա է:

Նայեցի անմաօրէն, թէեւ եղբօրը չեի ճանաշում:

— Աը փորձեմ ձեռքի նշանով հասկացնել, որ մենք
դրամ չունինք, ասաց դարձեալ իս...ը:

— Փորձիր, իսկ ես կը հսկեմ վերակացուի շարժ
ու ձերն:

Իւ իմ խեղճ ընկերը աջ ձեռքը զգուշութեամբ
բարձրացրեց մինչև զօտին, բթամատը զգուշութեամբ
քահց ցուցամատին՝ յուսուլով թէ բլրի կատարից դիտող
եղբարը կը հասկանայ՝ թէ մենք փող շունինք:

Ծիծաղս չկարողացայ պահնել ընկերոջս այդ օրինակ
միամիտ փորձի վրայ ու փրթկացի:

Վերակացուն ուշագրութիւնը լրիկ կրկնապատկեց, փորձե-
լով հասկանալ յանկարծական ծիծաղիս պատճուը,
ապա իր ժամացոյցին նայելով՝ պատիրեց ներս գնար
քառորդ ժամն անցել էր, ուրեմն գարձեալ բսանեշորս
ժամ պիտի վակւէինք մեր գարշահու բնում:

Ներս մտանք, վերատին կծկեցինք պատերի տակ, ես փոր-
ձեցի պայուններ գործել մեր բնում, բայց տեղն այնքան
փոքր էր, որ շուտով գլուխս դարձաւ ու ես էլ տեղ
բռնեցի մի պատի տակ: Աւ խորհում էինք, թէ ինչպէս,
ի՞նչ միջոցով լուր տանք դուրս, որ մեզ մի փոքր փող
հացնեն: Մասածածներս մէկը միսից անգործնական,
յաճախ նոյնիսկ ծիծաղելի էին: Եւ ընդհանուր շա-
րում մի մէջ յանկարծ նս...ը ձեռք առաւ մեր մի հատիկ
սրբիչը, թիւ, ասեղ, որ թողել էին մեզ և սկսեց ինչ որ
սակագործել:

Ի՞նչ ես անում:

— Ասու կացէք, աղե՛ր, գտել եմ հնարը, պատճ-
խանեց իս...ը խնդագին:

— Ի՞նչ հնար:

— Փողի հնարը, ահա սրբիչի վրայ կասեղնագոր-
ծեմ՝ ուսւ փող չունեմեան: Յետոյ, դուրս կը տա-
եղբօրս, իբր թէ լւանելու ու նա կը հասկանայ: Վերա-
կացուները զիսի չեն ընկնի: թէ ինչ է զբած, նրանք
կը կարծեն՝ թէ դա իմ ազգանունն է:

— Այդ լաւ է, ասացի ես կատակով, բայց պէտք է
հասկացնել նաև, որ փողը յանձնելու է բանդային
դրասենեակը:

— Հատ լաւ, ուրեմն կասեղնագործեմ՝ ուսւ փող
չունեմ աւելք կօնտօրեան:

— Աֆերիմ, խելքիդ մատաղ քետմբախ ռուսի խելքը

* Հանդարսու

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԿԱՆ 805

„Դրաշակի ի խթագրութեանը հետեւեալ առաջին ստոցառ Քրանոսիայի Ըսկերվարական Առաստիցութեան կենտրօնից.

Սիրելիք քաղաքացին:

Յիրանսարիայի Ընկերությունը պիտի գումարէ
իր համազգային Կօնգրէն յուլիս 13, 14, 15 և 16-ին,
որ պիտի լինի Նախապատրաստական մի ժողով Այբեննացի
Միջազգային Կօնգրէի համար։

Նախքան համագումարը, յուլիս 12-ին տեղի կունենայ Պարիզի շրջակայ դաշտերի մէջ մեծ հանդեպատճելու համար այն յաղթանակը, որ մենք տարածք վիրջին ընդհանուր օրէնսդրական ընտրութիւններին Պիտի մասնակցին այդ հանդէսին մեր 101 ընտրեալ երեսփոխանները և յուսով ենք ամբողջ աշխատաւոր դաստիարակը պիտի աջակցէ մեզ՝ արժանաւոր կերպով շեշտական Ազգային կոմիտեն ուժը մեր երկրում:

Մենք չափազանց ուրախ կը լինեինք, եթէ Զեր կուսակցութիւնը բարեհաձեւ իր ներկայացուցիչը զբարմեզ այդ առիթով կատարւելիք հանդեսին խօսք առնելու համար:

Եղբայրական ողջուններով

ԱԶԳԱՑԻՆ ԽՈՐՀՈՒԻՆ ԿՈՂՄԻՑ

ՔԱՐՏՈՒՄ

b b b c u s b u h f b b b

Urbefestungs-Microsi uswund E.

Մարտէի Յառաջ խմբ. անուան. 55, 65, 66: Գումար 186 ժրանկականից կազմված է համապատասխան կազմութեանը ի նպաստ Երեք խմբակների համար՝ Ա. Յ. 3. 50 ժրանկ. Ա. 2. 40, Գ. Գ. 20, Ալեք 50, Լ. Տ. 50, Ա. Ա. 20, Ա. Հ. 20, Լ. Բ. 15, Ա. Ե. 10, Յ. Ա. 5: Յառաջ խմբի անուանը կազմված է գումար 706 ժրանկ:

Աւազանի և Կոմիտէս 150 ժր., Փարիզի և ենթականին առաջնահանձնութիւնը՝ 50 ժր., Քերաբանական հանձնութիւնը՝ 45 ժր.:

Եանստանի Քրիստության 1150, Գիլան Կոմ. 1170 դրանց
համար. Ա Վ-ի մեջում և նաև առևտուն տօնածառական ժամանակական գործականությունները:

Հայաստան Ամերիկա 403

(Continued from p. 6, 1B12-1B13)

Կայսրական կազմին միջոցով՝ Եւրոպութեալ ԱՌ Վ. Քերկս. 120 դր., ԱՌ. Փ. 40, Արք. Հիմն. 20, Պետ. Պարն. 10, Լևոն Թափառ. 40, Մարտ. Մուրաժ. 40, Նաև և 20, Հ. Վ. Պարտիզ. 108, Համբ. Գր. 40, Համ. Սոմ. 10, Համայն Յովակիլ. 20, հ. Էրդի. 45, Բ. Մուր 20, ԱՌ. Մուր 20, Տօք. Ա. Թ. 30, Յակոբ Երիեն. 20, Արդ. Երիեն. 40, Ա. Յով. 40, Լե. Յ. ի ձեռով 50, Վ. Արշա. 10, Համ. Թ. 10, ԱՌ. Վ. ի ձեռով 16, Թ. Թ. 10, Յով Եալ 20, Եր. Հայե. 10, Լ. Յով. ձեռամբ 10; Պահան 819 դր.:

Սար-Երի կազմին միջոցով: — Ներսութեան ԼՀ¹ Պ. Փ. 10
դր., Պ. Ա. 5, Ե. 2, 20, Պ. Վ. 2 և կես, Ե. Փ. 20, Ո. Պ. 20, Ո. 2
5, Մ. Պ. 20, Պ. Ե. 5, Յ. կ. 5, Ե. Ե. 5, Ո. Փ. 1, Ո. Ո. 5, Մ. Ո. 5,
Յ. Մ. 20, Պ. Մ. 2, Մ. Ա. 10, Ե. Բ. 5, Մ. Փ. 5, Վ. Ա. 5, Պ. 2 5,
Մ. Պ. 5, Ո. Մ. 10, Կ. Ա. 108, Վ. Մ. 20, Կ. Ա. 108, Ա. Մ. 10,
Պ. Ա. 10, Տ. Ա. 5, Պ. Պ. 10, Ա. Մ. 10, Տ. Պ. 10, Ա. Ա. 10, Ընթեան
618: Գումար 1265 պ.

Դ ո գ ի կազմին միջոցով. — Ներկասու համակրաքններ են՝ Աբր. Մարտ. 10 դր., Պօլո Պ. 10, Թագ. Պ. 30, Արար Օդ. 10, Ա. Մ Սարգ. 108, Մ. Մայ. 20, Եր. Ա. 20 և այլ 40, Ա. Պատ. 40, Զար Զաբ.

20, թիվերէկ՝ Յ. հ. 100, 06. Փ. 40, Ք. Պող. 108, Մէլ. Խուզ. 40,
Կրպ. Տօնէ. 40, Կր. Պատ. 10, Ա. Պատ. 10, Լ. Տր. 20, Հր. Մուս.
216, Ա. Տաս. 20, Ա. Բ. Բ. 54: Գամօք 966 որ:

Գ. Գիւղի կազմին միցոյն. — Ամ 10, Ամ 20: Գումար 30 դր.
Մ. Գիւղի կազմին միցոյն. — Պատրիկ 20 դր., Արմա-Արածին
20, Հռոմ Ս. 5, Խ. 10, Ամ 90, Հ. 8. 5, Թեղոյն 5: Գումար 165 դր.
Գումասագիսին կազմին միցոյն. (Տ. 2. Ճ.) 1. Տիր.,
Գ. Տիր., Մ. Գուլ., Յակ. Ազը, Ալեք. Տիր., Յակ. Կոմ., Պատ., Ակ.,
Լոր., Յար. Ական., Ամբ., Խ. Գր., Գր. Տիրամ. Աթիկ. Թ. Հ., Գ. Հ., Յար.
Բ., Դ. Տիր., Մ. Տիր., Յայի. 2., Անդր. Բ., Կող. Աթիկ., Տ. Ե. Գ. Ա.,
Ա. Քէշէ, Ա. Կըմ., Տ. Ե. Բ., Աթիր. Ազը., Խ. Տ. Գր., Տիգր. Գում.
10-նմանան դր., Հայկ Տ., Ավել. Ական., Պետ. Կ., Եր. Նիկ., Հա. Նիկ.,
Տօֆր. Լ. Գում., Տօֆր. Մ. Տ., 20-նման, Լ. Փ. 7, Հարին, Կո. Կո., Յայէ
Պ., Ա. Ա., Զ. Կոհէ, Թ. Հայր., Ամի, Հայկ Փ., Պ. Արման., 5-նման
Գումար 462 դր.:

Քիրանի կազմի մեջոց. — Եւթասութեա Եպ. Յար., Յար., Յար. Ա., Ար. Ա., Օ. Տ., Մ. Հա., Թ. Գ., Յար. Ա., Բ. Հ., Եր. Հ., Կ. Երկ., Յ. Ա., Օ. Մատ., Թ. Ահ., Կ. Ֆան., Յակ. Բ., Զար. Մատ., Յակ. Ա., Մ. Կոր., Լ. ձեռ., Մլր. Թամա, Խ. Եմէլէ, Ան. Ա., Աս. Կիր. 10-նական դր., Ան. Ա. 20, Բ. Բի. 20: Պահաւ 270 դր.:

Հինգ մասին կազմին միջոցու — Նիւթառութեան Եղ Միքայ, Կոյ-ի օրդի Ն., Յար, և. Վ. Ալիխան, Մինչ, Փառա, Թաղա, Միքայէլ 20-ական դր., Կր. Սիբ, 27, Քիւր, Կոյճակ, Մասնկ, Ալու, Շակը, Բաժմէն, Գևհ, Թահնիկ, Միբ, Օր. Ման, Անն, Յակ- Սարու, Կի. Գոյում, Լ. Օհան, Կոր. 2, Պէտ. Խո, Մ. Մելիք, թ. 2, Բ., Ալդ. Ք., Օր. Մանի 10-ական, Գ. Հան, Տիգր. Ե., Ս. Գուր., Յակ. Թիգր., Ան. Պալ. 5-ական: Գումար 412 դր.:

Ողիմականի հազարի միջոց։ — Եւթառութեան ԵՅ՝ Եւենի
108 դր., Եւենի 54, Տ. Փիլ. 25, Վարդես, Արքէն, Վաղարշապէ, Ար-
տարդ, Պարոյ, Պ. Ալեք, Արևի, Արա, Բ. Ա. Ալզահանը, Կոյճ, Վահի,
Կարին, Ա. Ք., Ժանէ, Քար-Խար, Հանդ Զօր, (Քէ) 20-ական, Ար.,
Կոմի, Ժարութի, Շահնի, Առն, Արամ, Մարտ, Գուլյա, Կրէտ, Անդ, Ա. Ա.,
Հայ, Խայճ 10-ական, Այճ, Վասոյ, Զոփուր, Պանության 5-ական:
Գումար 647 դր.:

Ա. Պարիսոյի կազմին միցով.—Խթառացելու եղ՝ Գ. Բ.
20 դր., Կոյ. Պ., Համբ. Խ., Պոլ. Խալ., Արձ. Շետ., Մինչ Պ., Բար-
կով, Ար. Խուման, Քեր. Տէր Դար, Յանիկ. Հայ., Սուր. Թղ., Յայ. Տա-
հիկ 10-նման, Անդ. Անդր., Յար. Պոյն, Յար. Վերիկ., Մինչ. Տէր
Դար, Գ. Անձ. Կոյ. Պետ., Յայի. Տօնիկ., Յայի. Պոյ., Անդր. Թ., Յայակ.
Պատ., Պատ. Կայ. Կոյ. Պատ. Պատ. Տար. Տար. Տար. Տար. Տար. Տար. Տար.

Ա դ կ ի մ ը է է ն ի կօմիտէին միջոցով. — Ներառանցը լց՝ Ար.
և 10, Յակ. Կար. 40, Խոյ. թ. 20, Աս. Ար. 20, Մար. թ. 20, Յոր.
Քիչ. 10, Յակ. Ճահ. 40, Ա. Դ. Սար. 40, Թուրք 20, Անդր. Ակր.
54, Եղ. Արք. 10, Մինչ 10, Հերու 20, Ա. Արձ. 10, Խորան
216, Միք. Ասպ. 54, Յահ. Փիգր. 40, Ցիր. Շիր. 20, Ար. 8, 10,
Անդր. Պերզ 20, Տ. Ա. թ. 40, Յոր 20, Ճամփարմ 10, Անր Ան. 10,
Միշ. 3, 10, Լ. Ա. Գոյս. 20, Մէհ-Ժիմ 30, Արխ 20, Ալսա 20, Մին.
Ասպ. 10, Կ. Բագ. 10, Ա. Ա. 15, 3. Անժ. 10, ինք կիմեր. 10 3 / 8,
Ճայր 20, Պերս 48, Ամբ 100, Պ. Անրան 20, Վահ. Կր. 10, Վարդ.
Կրէ 10, Հինգ կիմեր. 23, Հինգ օրինարմեր. 25, Ամբ 47, Օրիոդ Ա.
5, Պ. Ա. 20, Վաղ. Ար. 20, Քր. Դ. 20, Ա. Ար. 10, Քր. Ուզ. 20, Պէ.
Քր. 20, Ար. Տօն. 10 Քրէ և ընթառ 10, Եր. Պահ. 10, Անդր. Շ. 10,
Եղ. Ար. 20, Եղ. Քր. 20, Աս. Մինք. 20, Պէր. Վ. 10, Յակ. Ճափ.
10, Արժի 5, Կոր և սէր 10, Ճամփար 5, Անր Յ. 10, Զար. Կար.
10, Յարման 20, Յակ. Կար. 10, Մինք. Կար. 10, Տէր և Տիկին Յոյն.

Յ 20 Զ. Գլ. 40, Ցով. Կր. 10, Զ. Խօն. 20, Ապր. Սազ. 20, Ան. Խօն. 10, Զար. Եհ. 40, Անդ. Մա. 40, Առեր. Քիր. 20, Աս. Խաղ. 108, Ա. Ներկ. 10, ԱՌ. Թոփ. 54, Ցով. Պ. 20, Պար. Բ. 20, Այր. Խար. 20, Պար. Պառ. 5, Զար. Պար. 10, Աս. Պ. 10, Գլմ. Եր. 10, Խօն. Ներկ. 10, Յր. Խա. 10, Օ. Գ. 5, Վահազ. 5, Ա. Թոնիք. 5, Վ. Նուբար. 5, Հրաման. 5, Կախե. 5, Վարդ. 5, Վերյ. 5, Անգը. Քէ. 10, Առեր. Գ. 10, Վահ. Պի. 5, Պար. Ակ. 10, Օ. Ա. 10, Ցով. Խար. 10, Համբար. 10, Համբ. և. 30, Հայր. 27, Արժ. Փ. 5, Կրոյ. Եիլ 20, Վ. Գ. 20, Վ. Գոյ. 10, Հայրե. Խօն. 5, Արտ. Պար. 10, Տիգր. Տիր. 5, Հայկ. 10, Գրիգ. Եր. 20, Վահ. Պի. 5, Վահ. Կով. 10, Գր. Գոյ. 10, Տիգր. Պա. 5, Տիգր. Եր. 20, Գուշան. 2376 ուշ:

(Ծարունակելի)